ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

08.05.2020 Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի 24 անդամներից 19-ը

ՕՐԱԿԱՐԳ

1. Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների մասին (Զեկ.՝ ամբիոնի վարիչներ):
2. Ավարտական կուրսերի քննաշրջանի արդյունքների ամփոփում: /Զեկ.՝ Վ. Աղաբաբյան/
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնի վարիչները: Նրանք մանրամասն ներկայացրեցին ավարտական աշխատանքների կատարման ընթացքը և նախապաշտպանությունների արդյունքները: Զեկուցողները նշեցին, որ նախապաշտպանությունների ժամանակ որոշ ուսանողների աշխատանքներում նկատվել են խնդիրներ և թերությունները, որոնք հնարավորինս արագ շտկելու համար ուսանողներին տրվել են համապատասխան ցուցումներ և խորհուրդներ:

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 16 ուսանող, իսկ «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտությամբ՝ 3 ուսանող: Ըստ զեկուցողի հաղորդման՝ ուսանողների գերակշիռ մասը կատարել է աշխատանքի 50-60%-ը:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 14 ուսանող: Ուսանողների ճնշող մասը կատարել է աշխատանքի 70%-ը:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 38 ուսանող: Ուսանողների մեծ մասը հասցրել է կատարել տեսական գրականության վերլուծություն և շարադրում: Ինչպես նաև կատարել են հետազոտական մեթոդների հավաքագրում, համակազմի ընտրություն,

արդյունքների քանակական վերլուծություն: Նրանք գտնվում են վերջնական վերլուծությունների և եզրակացությունների շարադրման փուլում:

«Պատմություն» մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 11 ուսանող: Ուսանողների մեծ մասը ժամանակին հայթայթել է անհրաժեշտ գրականությունը, ճշտել աշխատանքի կառուցվածքը և այժմ շարադրանքի փուլում է:

Մասնակի բացառություններով ավարտական աշխատանքների կատարման ընթացքը բավարար է: Անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում ունենալ այն ուսանողներին, ովքեր դեռևս բավարար աշխատանք չեն կատարել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2019-20 ուստարվա ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցող Վ. Աղաբաբյանը ներկայացրեց ավարտական կուրսերի քննաշրջանի կազմակերպական աշխատանքների ընթացքի մասին: Չնայած այն փաստին, որ քննությունները իրականացվել են ZOOM համակարգով, պետք է նշել, որ այն եղել է պատշաճ կազմակերպված և գտնվել է դեկանատի և ուսումնամեթոդական վարչության մշտական ուշադրության կենտրոնում: Քննությունների մեծ մասը տեսաձայնագրվել է՝ հետագա խնդիրներից խուսափելու նպատակով: Զեկուցողը ընդգծեց, որ տարեցտարի բարձրանում է քննություններին ավարտական կուրսերի ուսանողների պատրաստվածության մակարդակը: 2019-2020 ուստարվա ավարտական կուրսերի քննաշրջանին մասնակցել է 82 ուսանող: Միայն գերազանց գնահատականներ են ստացել 16 ուսանող, գերազանց և լավ՝ 28, խառը գնահատականներ՝ 35, իսկ միայն բավարար՝ 3 ուսանող: Անբավարար գնահատականներ չեն արձանագրվել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, ասիս. Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի ավարտական կուրսերի քննությունների արդյունքները համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Կ. Պողոսյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Վ. Աղաբաբյան